## ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի թիվ 464-Լ որոշմամբ հաստատվել է «Աղբահանության համակարգի ռազմավարությունը և ռազմավարության կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագիրը»: 2021-2022 թվականներին իրականացվում և իրականացման ընթացքում են ծրագրում ընդգրկված միջոցառումները. Մասնավորապես. 2023թ մարտի 30-ի դրությամբ ռազմավարության միջոցառումների իրականացման ընթացքը հետևյալն է.

*1. ՀՀ տարածքում աղբահավաքության միջոցառումների իրականացում /1.1/*

2021 -2022 թվականների ընթացքում հանրապետության տարածքում իրականացվել են մի շարք տեղային մասշտաբի աղբահավաքության միջոցառումներ մարզերում ու համայնքներում, որոնք տեղի են ունեցել անհատական, հասարակական կազմակերպությունների, ՊՈԱԿ-ների կազմակերպչական ջանքերով:

Կարևորելով համաճարակի պայմաններում հանրային առողջության պահպանման, վարակի տարածման նվազեցման խնդիրը, ինչպես նաև հաշվի առնելով 2021 թվականին ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական և վարչատարածքային բաժանման փոփոխությունների գործընթացները՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից համապետական շաբաթօրյակ կազմակերպվել է միայն 2022 թվականի ապրիլի 30-ին, որին մասնակցել են հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, մարզային ու համայնքային ենթակայության հիմնարկների, մասնավոր ընկերությունների աշխատակիցներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, դպրոցականներ, ուսանողներ և բազմաթիվ կամավորներ: Աղբից մաքրվել են փողոցներ ու բակեր, միջպետական, հանրապետական, մարզային ու համայնքային նշանակության ճանապարհներ ու ճանապարհամերձ տարածքներ, անտառամերձ տարածքներ, այգիներ, պուրակներ, պատմամշակույթային հուշարձանների տարածքներ: Լվացվել են բազմաթիվ հուշարձաններ: Միաժամանակ վերացվել են շուրջ 50 մեծ աղբակույտեր ու աղբանոցներ:

*2. Աղբահանության տեղական պլանների կազմման մեթոդաբանության մշակում /1.2/*

Մշակվել, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի հետ քննարկվել է «Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման պլանի կազմման մեթոդաբանությունը», որը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Մեթոդաբանությունը նախատեսվում է հաստատել գերատեչական իրավական ակտով՝ «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

*3. Աղբահանության սխեմաների մշակման մեթոդաբանության և կիրառելի համակարգչային մոդելի (GIS համակարգի կիրառմամբ) մշակում /1.3/*

Մշակվել է «Աղբահանության սխեմաների մշակման մեթոդաբանությանը և կիրառելի համակարգչային մոդելը (GIS համակարգի կիրառմամբ), որը քննարկվել է ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԲՏԱ նախարարության և ԷԿԵՆԳ-ի հետ: Մեթոդաբանությունը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակզմ: Նախատեսվում է դրա կիրառման համար ծրագրային փաթեթների մշակում:

*4. Աղբահանության և թափոնների կառավարման ոլորտում գերատեսչությունների համագործակցության, ներառյալ վերահսկողության իրականացման բարելավմանն ուղղված միջոցների ձեռնարկում*

Աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ոլորտում ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի, մարզպետարանների, համայնքների, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի հետ բազմիցս կազմակերպվել են քննարկումներ ոլորտի խնդիրների շուրջ:

Դրա հետ մեկտեղ, նախարարությունը 2021 թվականի նոյեմբերի 10-ի թիվ ԳՍ/16/29095-2021 գրությամբ աղբահանության և թափոնների կառավարման ոլորտի բարելավմանն ուղղված համատեղ գործողությունների իրականացման, գործառույթների կրկնության բացառման նպատակով խնդրել է գործընկեր գերատեսչություններին ներկայացնել տեղեկատվություն յուրաքանչյուր գերատեսչության համակարգմամբ ոլորտում իրականացվող ծրագրերի և գործընթացների վերաբերյալ և միաժամանակ, ևս մեկ անգամ հայտնել ենք մեր պատրաստակամությունը աղբահանության և կոշտ թափոնների կառավարման ոլորտում բարեփոխումների, ինչպես նաև ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների իրականացման գործընթացներում:

*5. Աղբի հավաքման և փոխադրման համար ներգրավվող կազմակերպությունների համար գործունեության պայմանների սահմանում /1.5/*

Մշակվել է «Աղբի հավաքման և փոխադրման համար ներգրավվող կազմակերպությունների գործունեության նվազագույն պայմանների» նախագիծը, որը քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների ու Երևանի քաղաքապետարանի հետ և ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը նախատեսվում է հաստատել գերատեսչական իրավական ակտով՝ «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

*6. Շինարարական աղբի հավաքման, տեղափոխման և հեռացման և (կամ) օգտահանման ընթացակարգերի մշակում /1.6/*

Մշակվել է «Շինարարական աղբի հավաքման, տեղափոխման և հեռացման /կամ/ օգտահանման ընփացակարգը», քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը նախատեսվում է հաստատել գերատեսչական իրավական ակտով՝ «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

*7. Աղբի ժամանակավոր պահման համար փոխաբեռնման կայանների շահագործման նորմերի սահմանում /1.7/*

Մշակվել է «Աղբի ժամանակավոր պահման համար փոխաբեռնման կայանների շահագործման նորմերի» նախագիծը, քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախագիծը նախատեսվում է հաստատել գերատեսչական իրավական ակտով՝ «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

*8. Աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագրային դաշտի բարելավում /1.8/*

Մշակվել է «Աղբահանության ծառայությունների մատուցման տիպային պայմանագրի» նախագիծը, քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ և ներկայացվել ՀՀ վարչապետի

աշխատակազմ: Նախագիծը նախատեսվում է հաստատել «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

9. *Խոշոր եզրաչափի աղբի (2 բմ և ավելի մակերեսով կենցաղային ու ոչ կենցաղային սարքավորումների, այդ թվում՝ տրանսպորտային միջոցի հենասարք, թափք, մետաղական ջարդոն, էլեկտրատեխնիկական սարքավորումներ , էլեկտրոնային թափոններ, կամ այլ նմանատիպ իրեր), հավաքման, տեղափոխման և օգտահանման և/կամ հեռացման համար /1.9/*

Մշակվել, շահագրգիռ գերատեսչությունների հետ քննարկվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել «Խոշոր եզրաչափի աղբի հավաքման, տեղափոխման, հեռացման և /կամ օգտահանման ընթացակարգերի նախագիծը, որը նախատեսվում է հաստատել գերատեչական իրավական ակտով՝ «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

10. *Գործող աղբանոցների բարեկարգման և շահագործման համար քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նվազագույն նորմերի սահմանում /2.1, 2.2/*

Մշակվել, շահագրգիռ գերատեսչությունների հետ քննարկվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կոշտ կենցաղային թափոնների աղբավայրերի շահագործմանը և փակմանը ներկայացվող նվազագույն պահանջների» նախագիծը: Նախագիծը նախատեսվում է ներկայացնել ՀՀ կառավարության հաստատմանը՝ «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

*11. Քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին չհամապատասխանող առնվազն 50 աղբանոցների փակում /2.5/*

Մշակվել է 2023-2025 թվականների ՄԺԾԾ և 2023 թվականի բյուջետային ծախսերի համապատասխան հայտ, որը ներառվել է 2023 թվականի բյուջեում՝ հանրապետությունում առկա փակման ենթակա աղբանոցների փակման նպատակով:

*12. Առնվազն երկու նոր սանիտարական աղբավայրերի կառուցում՝ Հրազդանում (այդ թվում՝ երկու փոխաբեռնման կայաններ Ակունք և Մարտունի համայքներում) և Երևանում /2.6/*

Մինչև 2023 թվականի առաջին կիսամյամկում կավարտվեն Հրազդանում կառուցվող հանրապետությունում առաջին սանիտարական աղբավայրի և Ակունք ու Մարտունի բնակավայրերում փոխաբեռնման կայանների շինարարական աշխատանքները:

*13. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարեու մասին» օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ /3.1/*

Մշակվել է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը նախարարության 22.12.2021թ թիվ ԳՍ/16/33131-2021 գրությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ: Այնուհետև աշխատակազմից այն վերադարձվել է լրամշակման՝ օրենքի նախագծից բխող համապատասխան դրույթների վերաբերյալ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու առաջարկով: Օրենդրական փաթեթը մշակվել, քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ և հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից, ինչպես նաև ՀՀ Ազգային Ժողովի առաջին ընթերցմամբ:

*14. Աղբի բաղադրության ուսումնասիրության իրականացման համար մեթոդաբանության մշակում /3.2/*

Մշակվել և շահագրգիռ գերատեսչությունների ու մարզպետարանների հետ քննարկվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Աղբի բաղադրության ուսումնասիրության իրականացման մեթոդաբանությունը»: Մեթոդաբանությունը նախատեսվում է հաստատել գերատեչական իրավական ակտով՝ «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

*15. Կենսաքայքայվող թափոնների օգտահանման և մշակման առաջարկությունների և ընթացակարգերի մշակում /3.3/*

Մշակվել և շահագրգիռ գերատեսչությունների ու մարզպետարանների հետ քննարկվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Կենսաքայքայվող թափոնների հավաքման և օգտահանման ընթացակարգի» նախագիծը, որը նախատեսվում է հաստատել գերատեչական իրավական ակտով՝ «Աղբահանության մասին ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից հետո:

*16. Բնակչության տարբեր խավերի շրջանում, այդ թվում՝ կրթական հաստատություններում դասընթացների, կլոր սեղանների, գիտական կոնֆերանսների, աշխատաժողովների, հանրային քննարկումների կազմակերպում, այդ թվում՝ համագործակցելով միջազգային կրթական և ոլորտում գործող կառույցների հետ: Իրազեկվածության բարձրացման միջոցառումների կազմակերպում /4.1, 4.2/*

Հաշվի առնելով 2021 թվականի սահամափակումները՝ պայմանավորված Քովիդ 19-ով, աղբահանության ոլորտին առնչվոց բոլոր քննարկումները, կլոր սեղանները կայացել են հիմնականում առցանց տարբերակով, որին մասնակցել են հասարակական, կրթական, ակադեմիական հանրությունը, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչները:

2022 թվականին կազմակերպվել են գործընկերների աջակցությամբ բազմաթիվ կլոր սեղաններ, քննարկումներ, աշխատաժողովներ ու համաժողովներ կապված կոշտ թափոնների կառավարման ու աղբահանության ոլորտին առնչվող հարցերի շուրջ, ինչպես նաև կազմակերպվել են իրազեկման ու ուսուցողական միջոցառումներ: ՀՀ մարզերում, Երևան քաղաքում գործընկեր գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության հետ մի շարք միջոցառումների, առցանց հանդիպումների ընթացքում հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով ներկայացվել է հանրապետությունում աղբահանության համակարգի բարելավմանը միտված միջոցառումները, մատնանշվել աղբի հետ պատշաճ գործածության բնապահպանական և սոցիալ-տնտեսական օգուտները:

Բացի այդ, նույն ժամանակահատվածում Հայաստանի Հանրային հեռուստաընկերության եթերներով, ՀՀ կառավարության և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆեյսբուքյան պաշտոնական էջերով բազմիցս լուսաբանվել է «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ծրագրի շրջանակներում Հրազդանի նոր սանիտարական աղբավայրի կառուցման շինարարական աշխատանքները, որը նմանատիպ առաջին աղբավայրն է լինելու ՀՀ տարածքում: Ընդգծվել է վերջինիս կարևորությունը ոչ միայն երկու մարզերի, այլ նաև ամբողջ հանրապետության տարածքում ինտեգրված կայուն աղբահանության համակարգի ներդրման մեկնարկի համար:

*17. Ազգային, մարզային և համայնքային մակարդակով թափոնների կանխարգելման և կրճատման ծրագրերի մշակում և իրականացում /4.4/*

Մշակված «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարումը, աղբավայրերի շահագործման ու փակման նվազագույն նորմերի սահմանումը, աղբահանության տեղական պլանների կազմման, աղբի բաղադրության ուսումնասիրության մեթոդաբանությունների մշակման գործընթացները ուղղված են ինստիտուցիոնալ և օրենսդրական հենքի ստեղծմանը՝ թափոնների կանխարգելման ու քանակի նվազեցման ծրագրերի մշակման ու իրականացման համար: Նշված աշխատանքների հետ մեկտեղ նախարարության կողմից աշխատանքներ են տարվում միջազգային կառույցների հետ նշված ուղղությամբ ծրագրերի իրականացման մասով, այդ թվում՝ շվեդական SIDA և Հայաստանի Ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնի հետ ծրագրային առաջարկներ են մշակվել, որոնց իրականացումը նախատեսվում է այս տարվանից սկսած: Միաժամանակ շարունակական աշխատանքներ են տարվում թափոնների վերամշակմանն ուղղված ծրագրային առաջարկների բազմակողմանի ուսումնասիրության և դրանց իրականացման հնարավորությունների մասով: